

Ս. Բաղդասարյան

ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՇՈՒՐՋԸ

Ամեն մի ստեղծագործություն, այդ թվում և մանուկների ու պատանիների համար գրված գեղարվեստական երկի համար, վիթխարի նշանակություն ունի լեզուն: Թեման ինչքան էլ բարձրարժեք լինի, այն չի հասնի իր նպատակին, եթե մանկական գիրքը աչքի չի ընկնում լեզվական բարձր մշակությամբ, եթե շարադրված չէ պարզ ու հասկանալի, անրոնագրոս ու դեղեցիկ, հյուսթեղ ու պատկերավոր լեզվով:

Երրորդ մեկընդմիջտ պետք է կանգնած լինի իր ազգային լեզվի դարգացման ու հարստացման համար մղվող պայքարի առաջին շարքերում: Իր ստեղծագործությունների մշակված, օրինակելի լեզվով նա ընթերցողների մեջ պետք է սեր առաջացնի դեպի մայրենի լեզուն, հանդես գա լեզվական բարձր ճաշակ դաստիարակողի դերում:

Հետպատերազմյան շրջանի մանկապատանեկան գրականություն լեզվի ամբողջական ուսումնասիրությունը առանձին և հատուկ նյութ համարելով՝ մենք այստեղ, միայն համառոտակի կանգ կառնենք բառապաշարի, նրա ընտրության ու գործածության մի քանի հարցերի վրա:

Հետպատերազմյան շրջանի սովետահայ մանկապատանեկան գրականությանը բնորոշ են բառապաշարի հարստությունն ու բազմազանությունը: Առավել լայն գործածության մեջ մտան սոցիալիստական շինարարությանը, արտադրությանը, գիտությանն ու տեխնիկային, նոր կենցաղին, կյանքի բազմազան ոլորտներին հատուկ բառերը, օրինակ՝ պարաշյուտ, հնգամյակ, կոմբայն, ռադիոգիր, ավտոշարասյուն, հերթագուրկ, զրահանք, կապավոր, էքսկավատոր, ինքնաքափ, ռազմաճակատ, կոմիսարիատ, տանկ, կոլտնտեսություն, քիմ, ֆուտբոլ, դարպասապահ, վոլեյբոլ, սահադաշտ, ֆաշիստ, ատոմ, ռադիո, գվարդիական, դատապաշտպան, կինո, ռեուախոս, տանկաշար, սահմանասյուն, հրթիռ, սավառնակ, արտադրողականություն, էլեկտրաշարժ, ջերմակայունություն և բազմաթիվ ու բազմազան այլ բառերի չենք հանդիպի մեր նախասովետական մանկապատանեկան գրականության մեջ, թեկուզ միայն այն պատճառով, որ այնտեղ արտացոլված, շոշափված չեն այն թեմաները, որոնք այսօր ամենահրատապն են մեր գրականության մեջ:

Հետպատերազմյան շրջանի գրականությունը հարուստ է այնպիսի դրոժերով, որոնք աչքի են ընկնում բառապաշարի բազմազանությամբ ու բազմակողմանիությամբ: Դրանց ընթերցումից պարզ է դառնում, որ գրողը հարգանքով է վերաբերվել իր գործի և իր ընթերցողների նկատմամբ, հոգ է տարել, որ երկրում ամեն ինչ, այդ թվում, և բառերը, լինեն իրենց տեղում, ճիշտ գործածվեն և դրանով իսկ մեծ դեր է կատարել ընթերցողների լեզվական ունակություններն ամրապնդելու և զարգաց-

ներու ուղղությամբ: Այդպիսի գործերից են՝ Ստ. Զորյանի «Մի կյանքի պատմությունը», «Մեր ծանոթները», Արաքսի «Զվարթ ձայները», Սարմենի «Ծաղկածորը», Վ. Գրիգորյանի «Դպրոցի ճամբան», Ա. Դավթյանի «Փոխարինողը», Ս. Կապուտիկյանի «Ծանր, բակում, փողոցում», Ս. Մուրադյանի «Առաջին երգի» մի քանի գործերը, Շ. Թաթևիկյանի «Ընտանիքը» ժողովածուի «Քանի ընկեր ունես», «Մեկ և կես ժամ», «Կորած կիրակի» պատմվածքները, Հ. Շիրազի, Վ. Վարդանյանի, Հ. Ղուկասյանի, Խ. Հրաչյանի ստեղծագործությունները և այլն:

Այս և մի շարք այլ գործերի բառապաշարը հարուստ է ու բաղմապիսի, իսկ որքան հարուստ ու բաղմաղան է գրողի բառապաշարը, այնքան հարուստ է լեզուն:

Հետպատերազմյան շրջանի մանկապատանեկան գրականության բառապաշարի քննությունը, սակայն, ակնբախ կերպով ցույց է տալիս, որ այն ունի լուրջ թերություններ: Հաճախ որոշ գրքերում տեղ են գտել այնպիսի բառեր ու բառաձևեր, որոնք անմատչելի են ու անհասկանալի: Հ. Շիրազի «Օձն ու մեղուն» օրինակելի լեզվով գրված գործում հանդիպում ենք. դժնի, ունայն, մարդահալած և այլ բառերի, որոնք վկայում են, որ հեղինակը մի պահ, կարծեք, մոռացել է իր ընթերցողների լեզվական կարողությունները:

Ա. Ղուկասյանի՝ մանուկների և պատանիների համար գրված հեքիաթներում հանդիպում ենք. իշխաճազն, սպառազն, դալարազն, անգոսնել, մանկամարդ, դեռատի, հողմարշավ, ձեռնուցայն, սնար, անձկություն, մոլուցք և այլն:

Մանկապատանեկան գրականության բառապաշարի հետ չեն ձուլվում նաև հարսանյաց, գինաբուք, հեղասահ, երկնասուլյա, չքնաղագեղ, խոլ, արյունակզակ, աղծապիղծ, սատակել, գմրուխտացուլ, օրհաա, նանիր, լեռնապար և այլ բառեր ու բառաձևեր, որոնք գործածված են Մ. Հարությունյանի «Հարսնաքար» գրքույկում:

Օրինակները կարելի է բաղմապատկել, բայց այսքանն էլ բավական է ցույց տալու համար, որ նման բառերի առկայությունը բացասաբար է ազդում մանկապատանեկան գործերի լեզվի պարզության, հեռակապես և դյուրըմբռնման վրա:

Այս շրջանի մանկապատանեկան գրականության բառակազմի մյուս թերությունն էլ բառերի սխալ կիրառությունն է: Անցյալի ու ներկայի բոլոր նշանավոր գրողները հսկայական ուշադրություն են դարձրել այն բանի վրա, որ գեղարվեստական ստեղծագործության մեջ ամեն մի բառ գործածված լինի ճիշտ: Մայակովսկին իր մասին ասել է, որ ամեն մի բառի համար հազարավոր տոննաներով բառահանք էր պեղում: Հանրահայտ է հայ մեծ բանաստեղծ Հովհ. Թումանյանի այս ասույթը. «Ամեն մի հնչյուն, ամեն մի բառ, ամեն մի ձև կամ ոճ մի մեծ ստեղծագործություն է ու մի մեծ աշխարհ»¹:

Մեր գրողներից ոմանք, ցավոք սրտի, հոգատար չեն բառի նկատմամբ, մեր լեզվի ամենասովորական բառերը, իրեմն, նրանց երկերում հանդիպում են սխալ գործածությամբ:

¹ Հ. Թումանյան, Երկեր, հատ. 4, Երևան, Հայպետհրատ, 1954, էջ 373:

Հայերենի հարստություններից մեկն էլ այն է, որ կենդանիների տարրեր խմբերի համար ունի առանձին բառեր՝ սմբակավորների երամակ, խոզերի բոլոկ, միջատների պարս, սողունների, ձկների վտառն, թռչունների երամ, գազանների ոհմակ և այլն։ Այդ բառերն իրար հետ շփոթելը կամ դրանց սխալ գործածությունը ցանկալի չէ գրողի, մանկագրի համար։

Վ. Անանյանի ստեղծագործությունը յուրահատուկ է իր թեմատիկայով։ Տաղանդավոր արձակագիրը հայտնի է ոչ միայն սովետական ընթերցողին, այլև դեմոկրատական շատ երկրներում, նրա գործերում առտացողվել է մեր հայրենիքն իր բազմազան ու բազմապիսի գրավչություններով, բուսական ու կենդանական աշխարհի հարստությունով։ Ընթերցողն իրավունք ունի նրանից պահանջելու, որ բնությանը, կենդանական աշխարհին հատուկ բառերը օգտագործի ճիշտ ու անսխալ։ Սակայն, դժբախտաբար, Վ. Անանյանի գործերում հանդիպում ենք վերոհիշյալ ինչպես և այլ կարգի շատ բառերի սխալ գործածության դեպքերի։ Բերենք մի քանի օրինակ. «Սևանի ափին» հանրահայտ վիպակում, «Որսորդական պատմվածքներում» հանդիպում ենք. ձկան բոլոկներ, ձկների երամ, հոտից ետ մնացած ձկներ, ձկների մի խումբ, օձերի մի խմբի հանդիպեցինք և այլն։

Ձկների, ինչպես նաև օձերի խմբերը մեր լեզվում կոչվում են վտառն, եթե երկու դեպքերում էլ սխալ չի լինի և կարելի է ասել խումբ, ապա միանգամայն անթույլատրելի է, երբ գրողը ասում է, ձկների երամ, բոլոկ, և այլն։

Եթե հատ ու կենտ դեպքերում Անանյանը գործ է ածել «վտառն» բառը, ապա այն էլ սխալ՝ վտառ գրությունով։

Վ. Անանյանի մոտ հանդիպում ենք արջը բվվաց, մեղվանոցում մեղուները նվում էին. պախրան պողպեղով, ոտներով քանդում էր ձինն ու խուլ բվացնում...¹ Անշուշտ ոչ արջը ոչ էլ պախրան չեն բվում, և ոչ էլ մեղուները նվում են։

Կասկած չի կարող, որ Անանյանը ստեղծել է մանուկ և պատանի ընթերցողներին գրավող, հետաքրքրությամբ կարդացվող վառ նկարագրությունների լավագույն պատմվածքներ, վիպակներ ու վեպեր, բայց անժխտելի է նաև, որ Անանյանը անհրաժեշտ ուշադրություն չի դարձրել դրանց լեզվական հղման վրա։

Դժվար է հավատալ, որ որևէ գրող կարող է շփոթել միրգը և բանջարեղենը, բայց մեր մանկագիրների մոտ պատահում են և այդպիսի դեպքեր։

Հ. Պողոսյանի «Կարդա այս գիրքը — տես ինչ է դառնում միրգը» գրքույկում կարդում ենք.

Ահա մի մեծ բանջարանոց,
Սովխողի մեջ լայնարձակ
Ուր թփեր կան ոսկեզօծ

¹ Վ. Անանյան, Սևանի ափին, Երևան, Հայպետհրատ, 1952, էջ 210։

Եեկ զգումներ անքանակ,
Վարունգ, պղպեղ ու պամիդոր
Կապույտ կեղև բաղրիջան
Ամենուրեք բերք անսովոր,
Մեր ողջ երկրում անսահման:
Ու մրգերն այդ քաղցր պես պես,
Լցված շոգով արևի,
Միշտ կազմում են ուրախ հանգես
Մեր լիառատ սեղանի՞ս:

Հարկ կա ասելու, որ նշվածներին ոչ մեկը միևեր չէ: Եվ ինչու միայն միևեր բառը. չէ՞ որ այս շրջանի մանկապատանեկան գրականություն մեջ նկատելի են շատ ավելի սովորական ու հասարակ բառերի սխալ գործածություններ: Այսպես՝ «նրա անունը Արշակ Դայան էր»:

«16-ից բարձր հասակ ունեցող բոլոր կոմերիտականներն էլ զինված էին»²: Թվում է, թե սլարդ է. Արշակ Դայանը անուն չէ, այլ անուն ազգանուն. այստեղ հասակ բառը ճիշտ չէ գործածված:

Սխալ են օգտագործված բնագծված բառերը՝ հետևյալ օրինակների մեջ.

«Սլանում են ավտոները
Փողոցներով զննակահար»³:

«Օգր մխորված է նրա մեղուների բզեզոցով»⁴ և այլն:

«Հետևյալ օրը, երբ թփի մոտ նստած խաղող էի փորձում»⁵ նախագատություն մեջ տեղին չի գործածված փորձել բառը ուտելու, ճաշակելու իմաստով: Եթե ուտելունում ասվում է пробоовать виноград, ապա հայերենում այն բնորոշված չէ:

Հ. Մկրտչյանը «Արարատյան դաշտի դարունը» ակնարկում գրել է. «Տները շրջապատված էին խաղողի բաղնիքներով»: Խաղողը կարող է ունենալ տունիկ, բուփ, վազ, վերջապես ողկույզ, բայց ոչ երբեք բաղնիք: Բաղնիքը բաղնիքներին պատկանող բույս է, որը սողում է գետնի վրա կամ մաղցում, փաթաթվում է ծառերին, բույսերին:

Օրինակները սրանցով չեն սպասվում: Ս. Սարգսյանի «Քուռիկի ջալալին» գրքույկում կարգում ենք.

«Առաջ վաղեց Թորոս քեռին գնձապատառ»⁶.

Ի՞նչ է նշանակում գնձապատառ, հայերենում այդպիսի բառ չկա կամ՝

¹ Հ. Պողոսյան, Կարգ այս գիրքը, տես ինչ է դասում միևեր.

² Զ. Դադյան, Իմ առավոտը, Երևան, 1949, էջ 64.

³ Նույն տեղում, էջ 56.

⁴ Ս. Հաբուրովյան, Տարա Պոլեշչուկ, Երևան, 1954, էջ 17.

⁵ Զ. Դադյան, Իմ առավոտը, էջ 27.

⁶ Վ. Անանյան, Մանկությունը լեռներում, էջ 125.

⁷ Կյոռ տարի գիրքը, սրացույց մանուկների համար, Հ. Մկրտչյան, Արարատյան դաշտի դարունը, Երևան, 1954, էջ 55.

⁸ Ս. Սարգսյան, Քուռիկի ջալալին, Երևան, 1947, էջ 10.

«Այն ժամանակ Արու-հասանը նույնչափ՝ բարձրահասակ ու բարակ էր, բայց դեռ չորացած, չմշկած չէր»¹։

Այս օրինակները ցույց են տալիս, թե մեր մանկագիրներին ոմանք, երբեմն, որքան անհոգ են բառերի բնորոշյան ու օգտագործման հարցում, որքան քիչ են հոգ տանում նրանց ճշգրտության մասին. մինչդեռ բառի ճշգրտությունը ոչ միայն ոճի, այլև՝ ամենից առաջ, մտքի պահանջն է։

Մայակովսկին «Сергей Есенин» բանաստեղծության մի տողը մշակում է բազմաթիվ անգամ. գրում է տարբերակներ՝

Вы ушли Сережа в мир иной.

Вы ушли безповоротко в мир иной.

Вы ушли Есенин в мир иной.

Ապա ինքն իրեն հարց է տալիս, որն է գրանցից տվելի լավը և պատասխանում է «все дрянь» ու շարունակում նոր փոփոխակներ գրել. որովհետև յուրաքանչյուր տողի մեջ նրան մի բառ դուր չի գալիս և խանգարում է արտահայտել իր միտքն այնպես, ինչպես ինքն է ցանկանում։ Մական մանկապատանեկան գրականության մեջ, ինչպես ցույց տվեցին բազմաթիվ օրինակները, անհոգությունն այդ հարցում երբեմն մեծ չափերի է հասնում։ Մի գիրք երբեմն վերահրատարակվում է մի քանի անգամ և բառային ու այլ կարգի սխալները գրքից գիրք են անցնում, այն դեպքում, երբ մի փոքր ավելի ուշագիւր լինելով՝ հնարավոր էր շտկել գրանքը։

Մանկապատանեկան այս շրջանի գրականության բառապաշարի մյուս թերությունը անձանոթ, չգործածվող նեղ բարբառային բառերն են, որոնք մթազնում են իմաստը և չեն հասնում բնթերցողին։ Այսպես, օրինակ՝ «ձին քչեց դեպի շևլուտը»։ «Եթե աղավինն խոտորի իր ճանապարհը»²։

Մոփետական հետախույզների հերոսական, խելացի, հայրենական պատերազմի տարիներին ցուցարկերած հայրենանվեր գործունեության մասին է պատմում Սո. Կուրտիկյանը «Հետախույզներ» գրքույկում։ Բեպքերն ու իրադարձությունները պատմվում են բավական կենդանի, հետաքրքրական։ Գրքույկը իր ամբողջության մեջ գրված է մշակված և օրինակելի հայերենով։

Այդ բնօրինակը մշակության հետ, սակայն, չեն մերվում մի քանի անձանոթ բառերը, որոնք օտարոտի են հնչում»

Այդ բառերը, անշուշտ, կան մասնագիտական կամ այլ կարգի բառարաններում, բայց նրանք, անկասկած, չեն մտնում մանկապատանեկան գրականության բառապաշարի մեջ։

Իերենք մի երկու օրինակ.

«...Չպիտի մոռանալ թշնամու պեյսեգատորները»³։

Կամ

«Կոկորդո չորացել էր ֆուրենգիստով հիվանդի կոկորդի նման»⁴։

¹ ՍՏ. Լիսյցյան, Արու հասանի մաշիկները, Երևան, 1946, էջ 3։

² Զ. Դուրում, Իմ առաջնորդ, Երևան, Հայպետհրատ, 1949, էջ 20։

³ ՍՏ. Կուրտիկյան, Հետախույզներ, Հայպետհրատ, Երևան, 1930։

⁴ Նույն տեղում, էջ 30։

Միթե կարելի է կասկածել, որ ընդգծված բառերը անհասկանալի կմնան գրքույկն ընթերցողներին մեծ մասի համար:

Հ. Հայրապետյանի առակներից մեկում կարդում ենք. «Սկսեց փտնել, անպատվել ձիուն»¹: Վերոհիշյալ բառերի շարքին են դասվում մանկապատանեկան գրքերում տեղ գտած թալկատումներ, խորդանոց և այլ բառեր:

Բառային անհարկի կրկնությունները, ինչպես ամեն մի գրական երկի, այնպես էլ մանկապատանեկան գրքերի լեզվի համար թերություն են: Ոչ մի դեպքում չի կարելի գրել «Հենան զանգրահեր մագերով մի փոքրիկ աղջիկ էր, մետաղագույն երանգներ, ծիրանագույն երանգ, անուշահոտ բույր ունի, դուրս էր հորդում հորդառատ գետ, նրբիմ ու ներդաշնակ նրբերանգներ, դեղնավուն գույն, մակագրություններ գրել և այլն:

Այդպիսիք են և հետևյալ օրինակները. դեղձենու ծառ, կաղնու ծառ և այլն: Դեղձենի, կաղնի բառերը իրենց մեջ ամփոփում են ծառի իմաստը՝ ճիշտ այնպես, ինչպես խնձորենի, տանձենի, սալորենի, փշատենի, բալենի և այլն: Այս և նման կրկնությունները նույնպես ցույց են տալիս, որ մեր մանկական որոշ գրողներ լավ չեն² տիրապետում լեզվի նրբերանգներին:

Բառի ոչ տեղին գործածությունը հաճախ մթազնում է հեղինակի մտահղացումը, իսկ երբեմն էլ անհասկանալի ու չտպալորվող դարձնում պատկերներն ու համեմատությունները: Այսպես օրինակ՝

«Ժայռի ճակատը ծածկված է իրար դուգահեռ հորիզոնական նեղ շավիղներով, թարեքներով, կառնիզներով ու տեղ-տեղ էլ լայն դարեվանդներով»³: Ընդգծված բառերը տեղ գտնելով պատկերի մեջ՝ այն դարձրել են չտպալորվող, և ընթերցողը դժվարանում է հասկանալ, թե ի՞նչ է ցանկանում ասել գրողը և դա ինչպիսի ժայռ է և ի՞նչ առասպելական ճակատ ունի:

Դեղարվեստական երկի լեզվի գիպուկություն, պարզության և հրդկվածություն վրա բացասաբար են ազդում մոտ տարածության վրա նույն բառերի կրկնությունները: Հաճախ մեր որոշ հեղինակներ նույն բառը իրար բավականաչափ մոտ կրկնում են մի քանի անգամ, որը առաջ է բերում ոճի տաղտկալիություն և կարդալուց հետո հիշողության մեջ մնում է միայն այդ բառը:

Բերենք մի քանի օրինակ.

«...նախադահը կարող է իր տանը լինել, ավելի լավ է գնա սամը հայտնի, միևնույն է եթե վերադառնա իրենց տուն էլ, հայրիկը դարձյալ կողարկի նախադահի տուն»³: Այս նախադասության մեջ հեշտությամբ կարելի էր խուսափել տուն բառի այսքան կրկնությունից: Ստ. Ջորյանը մեր այն հեղինակներից է, որոնք չափազանց բծախնդիր են լեզվի հարցերում: Նրա բոլոր գործերը լեզվական մշակվածության, գեղեցիկ ու պատկերավոր լեզվի լավագույն օրինակներ են հանդիսանում, տվյալ դեպքում պարզ է դառնում, որ գիրքը վերահրատարակվելիս չի ճշտվել, և պատմվածքը լույս է տեսել այնպես, ինչպես շատ տարիներ առաջ:

¹ Հ. Հայրապետյան, փնջիկը, Կրկան, Հայպետհրատ, 1948, էջ 39.

² Վ. Անանյան, Որսորդական պատմվածքներ, Երևան, 1953.

³ Ստ. Ջորյան. Մեր ծանոթները, էջ 53.

Մասնաժամեր տաս պարտեզում
Ջրուցում են ու խոսում¹։

Խմրագրման, մշակման ու շտկման նպատակով առաջին իսկ անգամ կարգալուց հետո կոդացվելը, որ վերջին երկու բառերից մեկը ավելորդ է, որովհետև նրանք ոչնչով չեն լրացնում իրար, չեն փոխում եղածի իմաստը. զրուցել, խոսել երկուսն էլ, տվյալ դեպքում, նույնն են նշանակում, Կրկնելը միանգամայն ավելորդ է և անտեղի։

Այսպիսի օրինակները բավական շատ են մանկապատանեկան գրականության հատկապես արձակ գործերում. ինչպես՝ «Իմ միտքը շարունակ գրադեցնում է մի միտք»։ Շնա ինձ իսկույն ճանաչեց, և ես ստիպված էի իսկույն հեռանալ քաղաքից² և այլն։ Այս առթիվ շատ դիպուկ է ասել Մ. Գորկին.

«Պետք չէ կրկնել նույն բառը մոտ տարածության վրա, այդ ձանձրալի է»³։

Անսահմանորեն մեծ է ուսուսաց լեզվի դերն ու նշանակությունը ժամանակակից գրական հայերենի մշակման, հարստացման ու զարգացման մեջ։ Հայերենը, ինչպես և մեր Միության մյուս ժողովուրդների լեզուները, ուսերենից փոխ են վերցնում բառեր, արտահայտություններ, որոնք բնորոշ են սոցիալիստական գարաշրջանին։ Այդ բառերից շատերը մտնում են մեր լեզվի բառային կազմի մեջ, լայն չափով գործածվում գեղարվեստական, ինչպես և գիտական ու այլ կարգի գրականություններում։ Առհասարակ հնարավոր չէ խուսափել ոչ միայն ուսերեն, այլև որևէ օտար բառի գործածությունից, և չկա մի այդպիսի լեզու, որն իր բառային կազմի մեջ, իր զարգացման ընթացքում ընդունած չլինի բազմաթիվ օտար բառեր։ Մակայն, այս դեպքում էլ պետք է խուսափել ծայրահեղություններից, օտար բառերի չափից ավելի, և որ կարևորն է, անտեղի գործածությունից։ Եթե դրա փոխարեն կարելի է օգտագործել հայերեն բառը ոչ մի բանով չվնասելով երկի իմաստին, ընդհակառակը, ավելի պարզ ու հասկանալի դարձնելով այն՝ ապահովել ստեղծագործության լեզվի մաքրությունն ու անաղարտությունը, ապա հեղինակն այդպես էլ պետք է վարվի։ Դա է պահանջում մայրենի լեզվի և գեղարվեստական գրվածքի ոգին։

Հետպատերազմյան շրջանի մանկապատանեկան երկերի լեզվի մեջ, սակայն, հաճախ կիրառված ենք գտնում օտար բառեր, որոնց գործածությունը միանգամայն անտեղի է, որովհետև նրանք ունեն իրենց հայերեն համարժեքները, որոնք ոչ մի բանով չեն զիջում օտար ձևին։

Անշուշտ, ոչ բոլոր գրողների մասին կարելի է ասել նույն բանը։ Այդ տեսակետից օրինակելի են Հ. Շիրազի «Իմ ընկեր լորիկը», ՇՕձն ու մեղուն», Արաքսի «Ջվարթ ձայները», Կ. Հոգտանյանի «Ջամպան», Հ. Հայրապետյանի, Ստ. Ջորյանի գրեթե բոլոր մանկապատանեկան գործերը, Վ. Անանյանի «Որսորդական պատմվածքները», Վ. Վարդանյանի

¹ Գ. Ռուսան, Ծաղկեփունջ, Հայպետհրատ, Երևան, 1946։

² Հ. Ղուկասյան, Հասանի հիշատակարանը, էջ 134։

³ Из письма А. М. Горького, Литгазета, 1954, 21 сентября.

«Երեխաները» և այլ երկեր, որոնց հեղինակները բացահայտորեն խոստովում են օտար բառերի անտեղի գործածությունից:

Սակայն, ինչպես արդեն նշեցինք, անտեղի գործածված բառերի մեծ թիվ կազմող ոչ հայերեն բառերն իրենց բացասական ազդեցությունն են թողել այդ շրջանի մանկապատանեկան գրականության լեզվի վրա, երբեմն զրկելով նրան պարզությունից ու դիպուկությունից:

Մանկապատանեկան գրքերում հանդիպում ենք լաֆետ, բիլոն, պիստոլետ, կոմբենեզոն, պլաշչ, բրեզենտ, Կոպիլազ, պուտ, նոմեր (Վ. Անանյան, «Սեանի ափին», «Մանկությունը լեռներում»), ռուլոն, արանպարտներ, վիշկա (Հ. Հուկասյան, «Հասանի հիշատակարանը»), աֆիշներ, շոսե (Վ. Վարդանյան, «Երեխաները»), յարուս, սպեցովկա (Բ. Սեյրանյան, «Ձուլարանի կրակները»), բազա, լինգա, ջեմբեռ, սեմաֆոր, ֆորսոնկա, կոնսերվ (Ա. Արաքումանյան, «Ծանապարհորդություն ապակու աշխարհում») և այլն:

Ինչպես տեսնում ենք, բերված բառերի մեծ մասը հայերենում ունի իր համարժեքը, որից մեր մանկագիրները, միանգամայն անտեղի հրաժարվել են, ընթերցողի համար միանգամայն անհասկանալի պատճառներով կիրառելով այսօրվա օտար բառեր: Ինչով վատ են հայերեն ատրճառով, արտահագուստ, անձրևաթափ, գլանակ, խնուղի և այլ բառերը, որ մեր գրողները գրանց փոխարեն կիրառել են պիստոլետ, կոմբենեզոն, պլաշչ, և այլն:

«Об очистке русского языка» հոդվածում խոսելով ողեսաց լեզվի մեջ անտեղի գործածվող օտար բառերի մասին՝ Վ. Բ. Լենինը նշում էր, թե ժամանակը չէ՝ արդյոք պատերազմ հայտարարելու առանց կարիքի, առանց անհրաժեշտության օտար բառեր գործածելու դեմ:

Լենինյան այս խորիմաստ գրույթը վերաբերում է նաև մեր լեզվին: Անհրաժեշտ է, որ մեր գրողները, տվյալ դեպքում մանկագիրները, օգտագործելով իրենց տրված հնարավորությունները՝ պայքարեն մեր լեզուն օտար, անհասկանալի տարրերով խճողելու դեմ՝ հանուն մաքուր գրական հայերենի, իսկ գրա համար նրանք առաջին հերթին պետք է խոստովեն իրենց երկերում նմանօրինակ բառերի գործածությունից:

Ոչ անհրաժեշտաբար օտար բառեր գործածելու հետ միաժամանակ այդ շրջանի գրքերում տեղ են գտել ամբողջական նախադասություններ և արտահայտություններ, որոնց մասին կարելի է ասել, որ գրանք հայերեն չեն: Բերենք մի երկու օրինակ.

«...Անցյալ տարի հազիվ չկարվեց և մնաց 6-րդ դասարանում»¹, «Երանք տեսնում են Սուրիկին գայլը շալակած և զարմանքից հազիվ չեն ուշաքափվում»², Այս երկու դեպքերում էլ մեր լեզուն ունի արտահայտման իրեն հատուկ եղանակը, պետք է լինեի «...Անցյալ տարի նա քիչ էր մնում կտրվեր և մնար 6-րդ դասարանում»: «Երանք տեսնում են Սուրիկին գայլը շալակած և զարմանքից քիչ է մնում ուշաքափվեն»: Արտահայտության բնագծված ձևերը հայոց լեզվում կիրառելի չեն և չեն հասկացվում:

¹ Զ. Դադյան, Իմ տոմարը, էջ 64, 87:

² Նույն տեղում:

Հայերեն չեն նաև ընդգծված արտահայտությունները. հետևյալ նախադասությունների մեջ.

«Բժվար էր պատկերացնել, թե ինչպես պետք է 10-րդ դասարանի աշակերտուհին վերցնել ու առանց մեկին հայտնելու գնար տնից»¹, «Ուսուցչուհու նման լուրջ դեմք ընդունած աւագ»² կամ՝

«Ալին իր կառավարի բարձր նստելատեղում նստած, ձեռքերը առաջ տարածած բացականչեց» և կամ «Ես երկար թախանձեցի, մինչև որ Արտաշիրը համաձայնվեց իմ նախադրերը իջնելուն»³:

Իր և իմ բառերը տվյալ դեպքերում միանգամայն ավելորդ են, գրանք կիրառելի են տվյալ շարահատության դեպքում ուսերենում, բայց ոչ երբևէ հայերենում:

Գրողն ու գրականագետը լեզվի ամենից ավելի հեղինակավոր ու պատասխանատու կազմակերպիչները, ձևավորողներն են, այդ պատճառով էլ մայրենի լեզվի բառապաշարի նման թերություններից ու սխալներից ամենից առաջ նրանք պետք է խուսափեն:

Գրականության հանճարը՝ և՛ նիկողանիչ Տոլստոյը անհուն զայրույթով էր լցվում այն գրողների նկատմամբ, որոնք բառերը գործ էին ածում սխալ կամ իրենց ստեղծագործություններում տեղ էին տալիս այնպիսի բառերի, որոնց իմաստը ընթերցողները չէին հասկանում:

Հանրահայտ է անմահ գրողի այն տառվթը, որ եթե ես թագավոր լինեի, ապա այն գրողին, որը գործ է ածում բառը առանց նրա իմաստը հասկանալու՝ կղրկեի գրելու իրավունքից և ճիպտի հարյուր հարյուր կհասցնեի: Մեծահանճար արվեստագետի այս. գուցե մի փոքր չափազանցված, խոսքերի մեջ արտահայտված է նրա ազնիվ զայրույթը լեզուն ազավաղողների նկատմամբ և խստապահանջությունը այս հարցում: Լեզվի նկատմամբ անչափ հոգատար և ուշադիր վերաբերմունքով պետք է բացատրել այն փաստը, որ Տոլստոյի շատ ստեղծագործություններ ունեցել են սառնահինգից քսան տարբերակ: Հետադոսողները հայտնաբերել են նրա մի գրվածքի իննսունից ավելի տարբերակներ:

Յուրաքանչյուր բառի ճիշտ ու տեղին գործածությանը մեծագույն նշանակություն էր տալիս Գորկին: Տեսական հոգիածներից բացի, այդ հարցին նա անդրադարձել է սկսնակ, ինչպես նաև գրական բավական ճանապարհ անցած, գրողների ձեռագրերը կարգալուց հետո՝ նրանց ուղղված նամակներում: Մի սկսնակ գրողի ձեռագրում Գորկին կարդում է. «Ես ծիծաղում եմ և ծիծաղը խցկում է ունգերս, աչքերս և բերանս», ես չեմ հասկանում, — գրում է Գորկին, — ծիծաղը ինչպես կարող է խցկել աչքերը, ունգերը, ծիծաղը փռչի չէ՞»:

Թումանյանը կարգալով Ռ. Պատկանյանի քանաստեղծությունը, գրել է.

Մարդս եկավ...

Կանաչ դաշտից, դալար դաշտից տուն եկավ՝

¹ Ա. Սեփանյան, Ոսկե մեղեդի, էջ 150:

² Հ. Գևորգյան, Հասանի հիշատակարանը, էջ 50:

³ Նույն տեղում, էջ 184:

⁴ Горький, Избранные литературно критические статьи, стр. 282.

⁵ Ռ. Պատկանյան, Հնտիք երկհատորյակ, հրատ. 1-ին, Պետերբուրգ, 1899, էջ 91:

Թումանյանը նշում է. «Ապա տվեք նկարչին նկարելու մի դաշտ, որտեղ ցորենի հունձ կա և անկասկած դեղին կնկարի և ինչպե՞ս կանաչ երևակայել այն դաշտը, որտեղից հնձվորը գալիս և ցորենի արտից խուրձ է բերում շալակին»³:

Մեր մանկական գրողների դերը չափազանց մեծ է մատաղ սերնդի դաստիարակման գործում: Կասկածից վեր է, որ նրանք այդ բնագավառում կատարել են աչքի ընկնող աշխատանք: Իրենց արձակ և չափածո գրվածքներում արտացոլելով մեր առօրյան՝ նրանք հասել են նվաճումների: Սակայն երբ այսօր ավելի քան լուրջ և խստագույն են դրվում դաստիարակության հարցերը, բնական է, որ մեր մանկական գրողները պետք է լինեն առաջին կրագծում: Նրանք պետք է արժարժեն ավելի քան հրատապ հարցեր, ավելի քան խիստ այժմեական թեմաներ: Որքան էլ այդ թեմաները լինեն կենսական, անսահմանորեն անհրաժեշտ, եթե չմատուցվեն պարզ, պատկերավոր, դիպուկ, անթերի լեզվով ու ոճով՝ չեն հասնի նպատակին:

Մեր գրողները պետք է է՛լ ավելի համառ, է՛լ ավելի ուշադիր և խնամքով աշխատեն իրենց ստեղծագործությունների լեզվի վրա:

³ Ն. Թումանյան, Թումանյանը գրականության ժողովրդայնության մասին, Սովետական գրականություն և արվեստ, 1949, № 2, էջ 104: